Հաստատում եմ՝
Հյուսիսային համալսարանի
ռեկտոր՝ Բ. Մ. Մակիչյան

« » մարտի 2010թ.

Հաստատված է համալսարանի
ուսումնամեթոդական խորհրդի 2010թ.
մարտի « » -ի նիստում
(արձ. №)

Կանոնակարգ
Հյուսիսային համալսարանում «Լավագույն ուսանող» մրցույթի անցկացման

1. Համալսարանի ուսանողության շրջանում բարձր առաջադիմության և օրինակելի վարքի համար առողջ մրցակցություն ծավալելու, ինչպես նաև ուսման որակի բարձրացմանը լրացուցիչ ազդակներ հաղորդելու նպատակով համալսարանում յուրաքանչյուր տարի անցկացվում է «Լավագույն ուսանող» մրցույթ:

2. «Լավագույն ուսանող» մրցույթն անցկացվում է համալսարանի բոլոր մասնագիտությունների բոլոր կուրսերում, Ալավերդու և Արթիկի բաժանմունքներում, ինչպես նաև համալսարանի շրջանակներում ամբողջությամբ վերցրած:

3. Մրցույթի արդյունքներով հաղթողներին շնորհվում է «Կուրսի լավագույն ուսանող», «Մասնագիտության լավագույն ուսանող», «Բաժանմունքի լավագույն ուսանող» և «Համալսարանի լավագույն ուսանող» կոչումներ:
   Լավագույներին որոշելիս հաշվի են առնվում ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուցանիշները և դեպարտամենտի (ֆակուլտետի) ու համալսարանի հասարակական կյանքին նրանց ակտիվ մասնակցությունը:

4. «Կուրսի լավագույն ուսանողը» որոշվում է տվյալ կուրսի ուսանողների ընդհանուր ժողովում, որն անցկացվում է դեպարտամենտի (ֆակուլտետի) ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ՝ հիմնական առարկաների դասախոսների մասնակցությամբ, բաց քվեարկությամբ:

5. «Մասնագիտության լավագույն ուսանող» կոչումը շնորհվում է տվյալ մասնագիտության ուսանողական խորհրդի նիստում, բաց քվեարկությամբ:
   Ընտրությունը կատարվում է այն ուսանողների թվից, որոնք որպես լավագույն են ճանաչվել տվյալ մասնագիտության կուրսերում:

6. «Բաժանմունքի լավագույն ուսանող» կոչումը որոշվում է բաժանմունքի ուսանողական խորհրդի նիստում, բաց քվեարկությամբ:
   Ընտրությունը կատարվում է բաժանմունքի տարբեր մասնագիտությունների կուրսերում որպես լավագույն ճանաչված ուսանողների թվից:

7. «Համալսարանի լավագույն ուսանողը» որոշվում է համալսարանի ուսանողական խորհրդի նիստում՝ բաց քվեարկությամբ այն ուսանողների թվից, որոնք հաղթող են ճանաչվել համալսարանի՝ ըստ մասնագիտությունների և բաժանմունքների անցկացված մրցույթներում:

8. Անցկացված մրցույթներում որպես լավագույն ճանաչված ուսանողները պարգևատրվում են համալսարանի ռեկտորի պատվոգրերով և հուշանվերներով, օգտվում համալսարանի անվճար համակարգ փոխադրվելու, ինչպես նաև անվանական կրթաթոշակ ստանալու առաջնահերթության իրավունքից:

Հյուսիսային համալսարանի
ուսումնական վարչություն